



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՎՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԿՈՄՍԱԿՐՈՆ ԸԱՅԱՆԱՅ ԻՐ ԶԵՆՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՐԵՍՆԱՍԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

ՅԱՐԳԱՆՔԸ ԵՒ ՊԱՏԻՐ Ո՛Չ ԹԵ ԻՄ ԱՆՁԻՍ Կ՛ԸՆԾԱՅԷՔ, ԱՅԼ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՄՐՏԻ ԽՕՍԸՈՎ ՀԱՆԴԵՍ ԵԿԱՒ ՀԱՅՐ ՄԻՌՈՆ

Հովանաւորութեամբ Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեանի, կազմակերպութեամբ Նորթ Հոլիվուտի Հայց. Առաք. Եկեղեցւոյ հոգաբարձութեան եւ նախաձեռնութեամբ 30-ամեակի յանձնա-խումբին, Ուրբաթ, 4 Մարտ 2011ի երեկոյեան, Կլենտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ հանդիսութիւն, նուիրուած Եկեղեցւոյ Հոգեւոր Մատակարար Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանի, անոր կուսակրօն քահանայ ձեռնադրութեան 30ամեակին առիթով: Ներկայ էին Ազգ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Տիար Խաժակ Տիգրիճեան, Թեմիս կրօնական եւ Ազգ. Վարչութեան անդամներ, ծխական Եկեղեցիներու հոգաբարձութեանց ներկայացուցիչներ, երեսփոխան ներկայացուցիչներ, սարկաւազաց եւ դպրաց դասեր, Տիկնանց միութեանց ներկայացուցիչներ, երիտասարդական միութեանց անդամներ, դպրեվանքի սասներ, ինչպէս նաեւ միութենական ներկայացուցիչներ եւ շուրջ չորս հարիւր հաւատացեալներ:

Երեկոյթի հիւրընկալներն էին Դպրեվանքի նախկին սասներէն, Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Նունէ Սեփեթճեան բարերար ամուլը:

Հանդիսավար Տիկ. Սօնա Մատարեանի բարի գալուստի խօսքէն ետք, Նորթ Հոլիվուտի Հայց. Առաք. Եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ Տիար Խաչիկ Թիթիգեան, յանուն Եկեղեցւոյ եւ ծխականներուն, անփոփ գիծերու մէջ ներկայացուց Գերայ. Հայր Սուրբին հակիրճ կենսագրականը, վեր առնելով անոր հոգեւոր ծառայութեան զանազան դաշտերը, որպէս կոչումի տէր Եկեղեցական ու հոգեւոր Հովիւ, մտաւորական ու դաստիարակ, հոգեշունչ քարոզիչ, հեղինակ ու ուսուցիչ, ծրագիրներ մշակող ու գործունեայ, աշխատունակ հոգեւոր մշակ: Տիար Թիթիգեան, յանուն հոգաբարձական կազմին եւ ծխականներուն, շնորհաւորելէ ետք Հայր Սուրբի երեսնամեայ հոգեւոր ծառայութիւնը՝ Հայ Եկեղեցւոյ ճամբով

Աստուծոյ ու հայ ժողովուրդին, քաջամողջութիւն եւ բեղմնաւոր գործունեութիւն մաղթեց: Ան յատուկ կերպով շնորհակալութիւն եւ երախտագիտութիւն յայտնեց 30 ամեակի կազմակերպիչ յանձնախումբին ու յատկապէս Տիար Յակոբ Ջաղացպանեանին, Տիկ. Սեդա Դարբինեանին եւ Տիար Կարօ Էշկիեանին:

Սեղաններու օրհնութենէն ետք, Տիկ. Էլենա Աւանեսեան եւ փոքրիկն Քեորգ Սկրտչեան հանդէս եկան երգով եւ արտասանութեամբ:

Թեմիս կրօնական ժողովին անունով Յոգշ. Տ. Պարթեւ Կրդ. Կիւլիմեան, աւետարանական մէջբերումներով, իր կարգին վեր առաւ Յայր Միւռնի հայ եկեղեցւոյ ու հայ ժողովուրդին երեսուն տարիներու հոգեւոր ծառայութիւնները, որպէս արժանաւոր հոգեւոր մշակ, Քրիստոսի եկեղեցւոյ խորհուրդները մատակարարող, հաւատացեալներու հոգեւոր կարիքները բաւարարող խորհրդատու հայր, Քրիստոսի եկեղեցւոյ անդամագրող հրաւիրակ, սգաւորները մխիթարող, խոստովանահայր, Քրիստոսի սուրբ Սեղանին պատարագիչ ու ննջեցեալներու հոգիները հանդերձեալ կեանք ճանապարհորդող:

Ֆրեզնոյէն ժամանած Բարեշնորհ Մարք Սր. Շիրին, որպէս Յայր Սուրբին նախկին դասընկեր եւ տարիներու գործակից, դիպուկ վկայութիւններով վեր առաւ Յայր Միւռնի նկարագրի գիծերը, շեշտելով որ ան որպէս հոգեւոր մշակ եւ ներհուն մտաւորական, կազմակերպչական հարուստ փորձառութեամբ, Ֆրեզնոյի հայ համայնքէն ներս եկեղեցանուէր օգտակար գործունեութիւն ծաւալած է. իր օրով բացուած է Շաբաթօրեայ հայկական վարժարանը, երիտասարդաց միութիւնը, «Ձայն» պարբերաթերթը կանոնաւոր լոյս ընծայուած եւ կանոնաւորուած՝ Կիրակնօրեայ դպրոցի ուսումնական ծրագիրը: Իր կատարած երախտարժան գործունեութիւնը եւ աշխատանքները, մինչեւ օրս երախտագիտութեամբ կը յիշուին Ֆրեզնոյի հայ գաղութի կեանքէն ներս:

Ազգ. Առաջնորդարանի «Լուսաւորիչ» երգչախումբը, ղեկավարութեամբ Յայր Պարթեւին, երկու երգերով հանդէս եկաւ: Իսկ Գագիկ Պատալեան, աշուղական եւ դասական երգերու բացառիկ ներկայացումով, խանդավառեց մթնոլորտը: Ապա Յայր Սուրբին հոգեւոր ծառայութեան բնագաւառները բնութագրող ու կեանքին զանազան հանգրուանները ներկայացնող տեսաերիզի մը ցուցադրութիւնը տեղի ունեցաւ: Իսկ Պաղտիկ Էքմէքճեան, Յայր Սուրբին գրած մէկ ոտանաւորը «Քեզի համար», ապրումով կարդաց:

Տիար Յակոբ Ջաղացպանեան, Կիրակնօրեայ դպրոցներու Վարիչ Մարմինին անունով, շնորհաւորեց Յայր Սուրբը, Յայ եկեղեցւոյ հոգեւոր անդաստանէն ներս անոր երեսնամեայ հարուստ եւ արդիւնաւետ ծառայութեան, յատկապէս այս վերջին տարիներուն, կիրակնօրեայ դպրոցներուն մատուցած իր անսակարկ նուիրումին եւ հետեւողական ջանքերուն համար, նշելով որ ան նպատակադրած է կիրակնօրեայ դպրոցներու կրթական մակարդակի բարելաւումն ու կազմակերպումը եւ ուսումնական ծրագրի կանոնաւորումը:

Ազգային Վարչութեան ատենապետուհի Տիկ. Ռիմա Պօղոսեան, Ազգ. Վարչութեան անունով, իր բարեմաղթութիւններուն առընթեր, շնորհաւորեց Յայր Սուրբի երեսնամեայ ծառայութիւնը՝ որպէս կիլիկեան Ս. Աթոռի

միաբան, որ իր երիտասարդ տարիներուն ջանաց լաւագոյնը իրագործել ու հայ եկեղեցւոյ ճամբով ծառայել մեր թանկագին հայ ժողովուրդի հոգեւոր կարիքներուն:

Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, երկար տարիներու միաբանակից եւ դպրեվանքեան օրերէն Յայր Սուրբը մօտէն ճանչցող, վկայակոչեց անոր հայ հոգեւորականի բարեմասնութիւնները, անձնորի նուիրումը հայ եկեղեցական արժէքներուն, հաւատքի տոկունութիւնը, աշխատունակութիւնը եւ մանաւանդ լուռ եւ համբերատար աշխատասիրութիւնը: Ապա իր խօսքերը սաղմոսէն ու Աւետարանէն առնելով եւ բնութագրելով Յայր Միւռնին նկարագրին շեշտուած երեսը, ըսաւ, որ Յայր Սուրբը իր բարի, խոնարհ ու հեզ նկարագրով, կը համընկնի ավետարանական այն խօսքին ու մեր Տէր Յիսուս Զրիստոս, նախքան իր աշակերտները Աւետարանի առաքելութեան եւ քարոզութեան ուղարկելը, թելադրեց որ ըլլան »աղանիի պէս անմեղ եւ օձի նման խորագետ«, այսինքն՝ իմաստուն, շրջահայեաց հարցերուն եւ իրողութիւններուն խորքը թափանցող: Ապա Առաջնորդ Սրբազանը, առ ի գնահատանք Յայր Սուրբի երեսնամեայ հոգեւոր ծառայութեան, անոր վիզէն ականակում լանջախաչ մը անցուց եւ մաղթեց նոր վաստակի կերտում ու բարձրացում՝ ծառայական կեանիք աստիճաններէն վեր:

Խանդավառ մթնոլորտի մեջ բեմ հրաւիրուեցան հոգաբարձութեան ատենապետ Տիար Խաչիկ Թիթիզեան եւ երեկոյթին հիւրընկալ Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Նունէ Սեփեթեան ամուլը, որպէսզի Յայր Սուրբին կողքին երեսնամեակի կարկանդակը կտրեն:

Սրտի խօսքով հանդես գալով՝ Յայր Միւռն, երախտագիտութիւն յայտնեց Թեմիս Բարեջան Առաջնորդին, յոբելենական հանդիսութեան իր հովանաւորութիւնը ընծայելուն, ինչպէս նաեւ անոր արտայայտած ազնիւ խօսքերուն եւ բարեմադրութիւններուն համար: Ընդհանրապէս խօսքը յայտնեց Ազգ. Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Տիար Խաժակ Տիգիճեանին, Թեմիս Կրօնական եւ Ազգ. Վարչութեան ներկայացուցիչներուն, հիւրընկալ ամուլին, եկեղեցիներու հոգաբարձական, երեսփոխանական Տիկնանց, սարկաւազաց, դպրաց եւ ուսուցչաց կազմերուն, բարեկամներուն եւ հիւրերուն, եւ առհասարակ ներկայ բարեպաշտ ու հաւատաւոր բոլոր հայորդիներուն: Դուք, ըսաւ Յայր Սուրբը, ձեր ներկայութեամբ, ոչ թէ իմ անձս պատուեցիք, այլ Կիլիկեան մեր դարաւոր Ս. Աթոռը ու անոր նուիրեալ միաբանութիւնը: Դպրեվանքն էր որ մեզ դաստիարակեց, պատրաստեց ու ծառայութեան դաշտ նետելով, մեզ հոս հասցուց: Դպրեվանքի բովէն անցնելով հասունցանք ու մեր մեջ հասունցաւ Աստուծոյ, եկեղեցւոյ ու մեր ժողովուրդին ծառայելու սերը: Ան խնդրեց, որ երեկոյթին մասնակցող բոլոր դպրեվանեցիներ պահ մը ոտքի ելլեն, որպէսզի ներկաները տեսնեն դպրեվանքեան մարդակերտումի գուպարէն դուրս եկող մեր սաները, որովհետեւ անոնք այսօր, մեր եկեղեցական եւ համայնքային ազգային կեանքէն ներս, իրենց գործօն մասնակցութիւնը եւ կարեւոր նպաստը կը բերեն: Նարեկէն հատուած մը կարդալով, Յայր Սուրբը անդրադարձաւ հայ եկեղեցականին յանձն առած զոհողութիւններուն, ինքնատուչութեան եւ վեր առաւ հայ եկեղեցականին առաքելութիւնը որ ծառայութեամբ կը բնորոշուի եւ կ'արժեւորուի: Իր

խօսքը եզրափակելով, Հայր Սուրբը ըսաւ. »Այսօր հայ եկեղեցին եւ եկեղեցականութիւնն է որ կը մեծարուի: Թող Տէր Աստուած իր իսկ հիմնած եկեղեցին միշտ կանգուն ու պայծառ պահէ«:

Այս առթիւ շնորհաւորական խօսքեր եւ բարեմաղթութիւններ յղած էին Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Մայր Եկեղեցւոյ հոգաբարձութիւնը, Գերշ. Տ. Նարեկ Եպս. Ալեմեգեան, Բարեշ. Ծօրճ Սրկ. Լէյլեկեան եւ Վարուժան Տէր Սիմոնեան:

«Կիլիկիա» մաղթերգով եւ «Պահպանիչ» աղօթքով, հանդիսութիւնը հասաւ իր աւարտին:

RECEPTION HELD IN HONOR OF THE 30TH ANNIVERSARY OF THE ORDINATION OF VERY REV. FR. MURON AZNIKIAN

On Friday, March 4th, 2011, a dinner reception was held in honor of the 30th anniversary of the ordination of Very Rev. Fr. Muron Aznikian into the priesthood.

The reception was organized by the Board of Trustees of the North Hollywood Parish, where Fr. Muron serves as Pastor, and was held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, at the "Armenak Der Bedrossian" Hall of St. Mary's Church in Glendale.

Among the nearly four hundred guests in attendance were Central Executive member Mr. Khajag Dikijian, Religious and Executive Council members, Boards of Trustees members, delegates, deacons and altar servers, and Ladies Auxiliaries members from various parishes, youth groups' members, Seminary alumni, and members of sister organizations.

The evening was hosted by Seminary alumnus Mr. and Mrs. Sarkis and Nune Sepetjian.

The program began with welcoming remarks by Mrs. Sona Madarian, who also served as Master of Ceremonies.

Throughout the evening, congratulatory remarks and well wishes were delivered by the following: Mr. Khatchig Titizian, on behalf of the North Hollywood Parish Board of Trustees, Very Rev. Fr. Barthev Gulmian, on behalf of the Religious Council, Deacon Mark Shirin from Fresno, Mr. Hagop Tchagaspanian, on behalf of the Sunday Schools' Directorate, and Mrs. Rima Boghossian, on behalf of the Executive Council.

The cultural program featured a reading by Baghdig Ekmekjian, recitations by Kevork Megerdichian and Ruzanna Ooligian, and songs by Elena Avanesian, Gagik Badalian, and the "Lousavorich" youth choir led by Fr. Barthev.

There was also a video presentation recounting the life and service of Fr. Muron.

In his message, the Prelate recalled the days when he and Fr. Muron were both students at the Seminary and spoke of the staunch faith, selfless service and devotion to our faith and church, and hard work of Fr. Muron which he has witnessed having worked closely with him for many years. The Prelate

then presented Fr. Muron with a pectoral cross in commendation of his 30 years of service.

After the Prelate's message, Board of Trustees Chair Mr. Khatchig Titizan and the hosts were invited to cut the 30th anniversary cake with Fr. Muron.

Fr. Muron was then invited to deliver his remarks. Fr. Muron expressed his gratitude to the Prelate for his kind words and well wishes, and his appreciation to all those who were present to celebrate this milestone.

The evening came to a close with the benediction by the Prelate, and the singing of the Cilician anthem.